Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
հունիսի 4-ի N 804 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
փետրվարի 9-ի N 167- Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) հերթական ատեստավորման (այսուհետ՝ ատեստավորում) ենթակա ուսուցիչների վերապատրաստման (այսուհետ՝ վերապատրաստում), ինչպես նաև տարածքային հանձնաժողովների ստեղծման և գործունեության հետ կապված իրավահարաբերությունները՝ բացառությամբ այն ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների, որոնք ունեն նախարարության կողմից երաշխավորված ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման ծրագիր:

2. Ատեստավորումն ուսումնական հաստատությունում զբաղեցրած պաշտոնին ուսուցչի մասնագիտական գիտելիքների, աշխատանքային կարողությունների և հմտությունների համապատասխանության որոշման գործընթացն է:

2. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման ամբողջական շրջափուլը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012

թվականի դեկտեմբերի 27-ի N 1667-Ն որոշմամբ՝ հիմք ընդունելով ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքների գնահատման և նախորդ ատեստավորման քննության արդյունքները:

4. Ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով՝ համապատասխան ստուգման արդյունքների հիման վրա:

5. Ուսուցչի՝ ատեստավորմանը մասնակցության համար հայտագրում է համարվում Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ԴԿՏՀ) մանկավարժի մասնագիտական զարգացման ենթահամակարգում «Ենթակա է ատեստավորման» նշման առկայությունը և ուսուցչի ատեստավորման շրջափուլի ավարտի վերաբերյալ տեղեկատվությունը:

6. Ուսուցիչը կարող է սահմանված ժամանակից շուտ մասնակցել ատեստավորման նպատակով գիտելիքների ստուգման քննությանը՝ ԴԿՏՀ-ի մանկավարժի մասնագիտական զարգացման ենթահամակարգում էլեկտրոնային թեստավորումից առնվազն երկու ամիս առաջ համապատասխան նշում կատարելու դեպքում:

1) Ուսուցչի ատեստավորմանը կարող է մասնակցել նաև սույն կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված անձը՝ ԴԿՏՀ-ի մանկավարժի մասնագիտական զարգացման ենթահամակարգում էլեկտրոնային թեստավորումից առնվազն երկու ամիս առաջ համապատասխան նշում կատարելու դեպքում:

7. «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ԳԹԿ) յուրաքանչյուր ատեստավորումից առնվազն քսան աշխատանքային օր առաջ հրապարակում է մեթոդական ուղեցույց, որում ներկայացվում են թեստերի կառուցվածքը, առաջադրանքներում ընդգրկվող նյութը, թեստի հարցերի քանակը, թեստավորման տևողությունը, թղթային եղանակով իրականացման դեպքում՝ ձևաթղթի լրացման կարգը և առաջադրանքների նմուշներ:

8. Ատեստավորման ենթակա մասնակիցների ցանկերի հիման վրա ԳԹԿ-ն ատեստավորումը կազմակերպելու նպատակով ընտրում է ատեստավորման կենտրոններ և ժամանակացույցով հաստատված առաջին ատեստավորումից առնվազն

10 աշխատանքային օր առաջ մասնակիցներին բաժանում է խմբերի: Յուրաքանչյուր մասնակցի համար պատրաստում և տրամադրում է անցաթուղթ:

9. Անցաթուղթը պարունակում է մասնակցի տվյալները (անունը, հայրանունը և ազգանունը), անձը հաստատող փաստաթղթի տվյալները (սերիան, համարը), մարզը, դպրոցը, առարկան, ատեստավորման կենտրոնի գտնվելու վայրը, խմբի համարը, գիտելիքի ստուգման օրը և ժամը, ինչպես նաև արդյունքների մասին տեղեկանալու համար 6 նիշից բաղկացած անհատական ծածկագիրը:

10. Ատեստավորման կենտրոնի խմբերում ընդգրկված մասնակիցների թիվը չի կարող գերազանցել 20-ը: Ատեստավորման սենյակում յուրաքանչյուր խմբի աշխատանքները համակարգում է՝ առաջին խմբի համար՝ երկու ներկայացուցիչ, յուրաքանչյուր հաջորդ խմբի համար՝ մեկական ներկայացուցիչ:

11. Ատեստավորման գործընթացն ատեստավորման կենտրոններում կազմակերպում են ԳԹԿ-ի տնօրենի հրամանով նշանակված՝ ատեստավորման կենտրոնի ղեկավարը և ներկայացուցիչները: Կենտրոնում հերթապահների ցուցակը կազմում և նրանց ներկայությունն ապահովում է տվյալ ատեստավորման քննական կենտրոնի ղեկավարը:

12. Ներկայացուցիչներին ըստ խմբերի բաշխում է քննական կենտրոնի ղեկավարը՝ ատեստավորման յուրաքանչյուր սենյակում նշանակելով պատասխանատու ներկայացուցիչ, որը կազմում է սույն կարգի 29-րդ կետով նախատեսված արձանագրությունները:

13. Ատեստավորման օրը մասնակիցը պարտավոր է ներկայանալ ատեստավորման կենտրոն՝ սույն կարգի 8-րդ կետով սահմանված անցաթղթում նշված ժամից 45 րոպե առաջ՝ իր հետ ունենալով անցաթուղթը և անձը հաստատող փաստաթուղթ:

14. Մասնակիցների մուտքը կենտրոն սկսվում է ատեստավորման կենտրոնի ղեկավարի հրահանգով:

1) Ատեստավորման սենյակ մուտք գործելուց առաջ քննություն հանձնողի մոտ ստուգվում է բջջային հեռախոսի կամ այլ սարքերի առկայությունը: Ստուգման ընթացքում կարող են օգտագործվել հատուկ միջոցներ: Հեռախոս կամ այլ սարքեր

հայտնաբերելու դեպքում դրանք հանձնվում են ատեստավորման կենտրոնի պատասխանատուին, որից հետո մասնակիցը մուտք է գործում ատեստավորման սենյակ՝ իր հետ տանելով միայն անձը հաստատող փաստաթուղթ:

15. Մասնակիցը մոտենում է իր խմբի ներկայացուցչին (թղթային եղանակով իրականացման դեպքում ստանում է պատասխանների ձևաթուղթը), ցուցակում ստորագրում է իր անվան դիմաց և նստում, ըստ վիճակահանության արդյունքի, համապատասխան նստարանին:

16. Էլեկտրոնային եղանակով թեստավորվելու դեպքում մասնակիցը մուտք է գործում հարմարեցված տարածք, համակարգիչներից մեկի առջև զբաղեցնելու տեղը որոշվում է վիճակահանության արդյունքում՝ ներկայացուցիչներից մեկի ներկայությամբ:

17. Թեստավորման հարցաշարը ներբեռնվում է թեստավորման համար ստեղծված էլեկտրոնային համակարգի միասնական բազայում:

18. Համակարգ մուտք գործելուց հետո միասնական բազայից մասնակցի համար ձևավորվում է թեստ, և ֆիքսվում աշխատանքի սկիզբը: Մասնակցի էջում հայտնված ժամացույցը հետհաշվարկի միջոցով ցույց է տալիս թեստավորման համար նախատեսված ժամանակը: Ըստ անհրաժեշտության՝ մասնակցին կարող է տրամադրվել առավելագույնը 30 րոպե լրացուցիչ ժամանակ:

19. Աշխատանքն ավարտելուց հետո մասնակիցը սեղմում է թեստի ներքևում տեղակայված «Ավարտել» կոճակը և էկրանին տեսնում է թեստի ճիշտ պատասխանների քանակը՝ արտահայտված տոկոսով: Թեստավորման արդյունքի մասին ամփոփաթերթը երևում է Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ յուրաքանչյուր ուսուցչի համար ստեղծված էջում աշխատանքն ավարտելուց առավելագույնը 24 ժամ հետո:

20. Աշխատանքն ավարտած մասնակիցը պարտավոր է անմիջապես դուրս գալ ատեստավորման սենյակից:

21. Թեստավորման արդյունքների բողոքարկումն իրականացվում է սույն կարգի 40-46-րդ կետերով սահմանված կարգով և ժամկետներում:

22. Աշխատանքն սկսվելուց 15 րոպե առաջ ներկայացուցիչը մասնակիցներին ներկայացնում է ատեստավորման անցկացման կարգը և տեղեկացնում բողոքարկման գործընթացի մասին:

23. Ատեստավորման սկիզբը հայտարարվելուց հետո արգելվում է ուշացած մասնակցի մուտքն ատեստավորման սենյակ:

24. Թեստավորման ընթացքում ատեստավորման սենյակից մասնակիցը կարող է դուրս գալ միայն անհրաժեշտության դեպքում՝ ներկայացուցչի թույլտվությամբ և հերթապահի ուղեկցությամբ:

25. Ատեստավորման սենյակում չեն քննարկվում թեստի բովանդակության վերաբերյալ մասնակցի հարցերը:

26. Թեստավորման ամբողջ ընթացքում ատեստավորման սենյակներում ներկա են գտնվում ներկայացուցիչները և քննական կենտրոնի ղեկավարը: Ատեստավորման սենյակներում կարող են ներկա գտնվել նաև լիազոր մարմնի ներկայացուցիչներ:

27. Եթե ատեստավորման ընթացքում (և՛ էլեկտրոնային, և՛ թղթային եղանակով իրականացվող) մասնակիցն առանց թույլտվության դուրս է գալիս ատեստավորման սենյակից, խոսում է այլ մասնակիցների հետ, փոխում է տեղն առանց քննական կենտրոնի ղեկավարի թույլտվության, զրուցում է, հուշում է, կամ նրա մոտ հայտնաբերվում է բջջային հեռախոս կամ այլ կապի միջոց, տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութեր կամ տեխնիկական սարքեր, թեստավորման առաջադրանքների կատարման համար աղբյուր հանդիսացող այլ միջոցներ, ապա ներկայացուցիչը պարտավոր է քննական կենտրոնի ղեկավարի և պատասխանատու ներկայացուցչի մասնակցությամբ դադարեցնել նրա ատեստավորումը՝ այդ մասին արձանագրելով ատեստավորման սենյակի մասնակիցների խմբի ցուցակի «Նշում» սյունակում, և տեղյակ պահել մասնակցին:

28. Ատեստավորումը դադարեցվելուց հետո տվյալ սենյակի պատասխանատու ներկայացուցիչը պարտավոր է արձանագրել կատարված խախտումը: Ատեստավորման գործընթացը դադարեցված մասնակցի աշխատանքը գնահատվում է 0 միավոր: Թղթային եղանակով իրականացվող թեստավորման դեպքում այդ

մասնակցի պատասխանների ձևաթուղթը չի սքանավորվում և չի ենթարկվում ստուգման:

29. Աշխատանքն ավարտած, ինչպես նաև հիվանդության պատճառով կամ սեփական նախաձեռնությամբ աշխատանքն անավարտ թողած մասնակցի համար կազմվում է համապատասխան արձանագրություն:

3. ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

30. Ատեստավորման հարցաշարը բաղկացած է երեք բաժնից, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 7-ի 1162-Ա/2 հրամանով: Յուրաքանչյուր բաժին ներկայացնում է հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշներով սահմանված զարգացման մեկ ոլորտի մասնագիտական գործունեության ոլորտները:

31. Ուսուցչի ատեստավորման արդյունքներն արձանագրվում են ըստ բաժինների և ընդհանուր:

32. Ուսուցիչը համարվում է ատեստավորված, եթե՝

1) ատեստավորման սահմանված շրջափուլի ընթացքում որպես մասնագիտական զարգացման կարիք գնահատվել է առարկայական գիտելիքի բաժինը, և համապատասխան առարկայի գիտելիքների ստուգման արդյունքում ուսուցիչը ցուցաբերել է առնվազն 60% արդյունք.

2) ատեստավորման սահմանված շրջափուլի ավարտին իր մասնագիտական զարգացման կարիքների գնահատման արդյունքով ձևավորված համապատասխան մակարդակի գիտելիքների ստուգման արդյունքում ուսուցիչը ցուցաբերել է առնվազն 60% միջին արդյունք, ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 7-ի 1162-Ա/2 հրամանով սահմանված յուրաքանչյուր առանձին բաժնից ցուցաբերել է առնվազն 60% արդյունք:

33. Ուսուցիչը համարվում է տվյալ մակարդակում չատեստավորված, եթե՝

1) ատեստավորման սահմանված շրջափուլի ընթացքում որպես մասնագիտական զարգացման կարիք գնահատվել է առարկայական գիտելիքի իմացության բաժինը, և համապատասխան առարկայական գիտելիքների ստուգման արդյունքում ուսուցիչը ցուցաբերել է 60%-ից պակաս արդյունք.

2) ատեստավորման սահմանված շրջափուլի ավարտին իր մասնագիտական զարգացման կարիքների գնահատման արդյունքով ձևավորված համապատասխան մակարդակի գիտելիքի ստուգման արդյունքում ուսուցիչը ցուցաբերել է 60%-ից պակաս միջին արդյունք.

3) ատեստավորման սահմանված շրջափուլի ավարտին իր մասնագիտական զարգացման կարիքների գնահատման արդյունքով ձևավորված համապատասխան մակարդակի գիտելիքի ստուգման արդյունքում ուսուցիչը ցուցաբերել է 60% միջին արդյունք, սակայն առանձին բաժնից կամ բաժիններից արդյունքը 60%-ից պակաս է:

34. Տվյալ մակարդակում չատեստավորված ուսուցիչը հաջորդ տարի ենթակա է ատեստավորման՝

1) առարկայի իմացության ոլորտով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի.

2) մասնագիտական զարգացման գնահատված կարիքի նախորդ մակարդակում՝ սույն կարգով սահմանված ատեստավորման նվազագույն շեմը չհաղթահարած բաժնից կամ բաժիններից.

3) նույն մակարդակում, եթե մասնագիտական զարգացման կարիքը գնահատված է ձեռնահասության մակարդակում, սակայն ուսուցիչը կամավոր ատեստավորված է:

35. Ուսուցիչը համարվում է ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանող՝

1) առարկայի իմացության գնահատված կարիքի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով չատեստավորվելու կամ ատեստավորմանը չմասնակցելու դեպքում.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ատեստավորված լինելու, սակայն ձեռնահասության մակարդակում երկու անգամ չատեստավորվելու կամ ատեստավորմանը չմասնակցելու դեպքում:

36. Ուսուցչի ատեստավորված լինելու վերաբերյալ կատարված նշումը ինքնաշխատ եղանակով արտացոլվում է Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ ուսուցչի էլեկտրոնային անձնական գործում:

37. Ատեստավորված ուսուցչի համար հաջորդ շրջափուլում մասնագիտական զարգացման կարիքի գնահատում չի իրականացվում: Մասնագիտական զարգացման կարիքը և ատեստավորման շրջափուլը որոշվում է Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով՝ ինքնաշխատ եղանակով:

38. Ավելի բարձր մակարդակում ատեստավորվել ցանկանալու դեպքում, ուսուցչի դիմումի համաձայն, վերջինիս համար կատարվում է մասնագիտական զարգացման կարիքի գնահատում, և ատեստավորման շրջափուլը սահմանվում է գնահատված կարիքին համապատասխան:

4. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

39. Էլեկտրոնային թեստավորման դեպքում՝ արդյունքի մասին ամփոփաթերթն ստանալուց հետո, իսկ թղթային եղանակով ատեստավորման դեպքում՝ ԳԹԿ-ի կայքէջում արդյունքների հրապարակումից հետո, մասնակիցը կարող է ատեստավորման արդյունքի հետ անհամաձայնության դեպքում ստանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ մինչև ժամը 19:00-ն էլեկտրոնային եղանակով ԳԹԿ-ին ուղարկել ատեստավորման արդյունքների բողոքարկման դիմումը:

40. Ատեստավորման արդյունքի բողոքը քննելու նպատակով ատեստավորումը կազմակերպած քննական կենտրոնի ղեկավարի հրամանով ստեղծվում է 5 անձից բաղկացած բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով), որը ձևավորվում է բողոքը մուտքագրվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են առարկայական մասնագետներ,

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) և ԳԹԿ-ի աշխատակիցներ: Հանձնաժողովն իրավազոր է, եթե որոշման կայացմանը մասնակցում է հանձնաժողովի առնվազն 3 անդամ:

41. Հանձնաժողովն իր ուսումնասիրության արդյունքների մասին գրավոր եզրակացությունը ներկայացնում է բողոքը ներկայացրած մասնակցին՝ հանձնաժողովի ձևավորումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքի քննարկման արդյունքի մասին որոշումն ընդունվում է բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:

42. Հանձնաժողովը չի քննարկում՝

1) սույն կարգի 41-րդ կետով նախատեսված ժամկետից հետո ներկայացված բողոքները.

2) թղթային եղանակով իրականացվող թեստավորման դեպքում՝ մասնակցի կողմից պատասխանների ձևաթղթի լրացման ընթացքում թույլ տրված վրիպումների կամ սխալների վերաբերյալ դիմումները:

43. Բողոքարկման արդյունքում հանձնաժողովն ընդունում է որոշում մասնակցի աշխատանքի միավորի պահպանման, բարձրացման կամ իջեցման մասին: Հանձնաժողովի որոշման հիման վրա մասնակցի աշխատանքի բողոքարկման արդյունքները հրապարակվում են ԳԹԿ-ի կայքէջում՝ բողոքարկման հանձնաժողովի կայացրած որոշումից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

44. Էլեկտրոնային եղանակով իրականացված թեստավորման դեպքում ԳԹԿ-ն բողոքարկման արդյունքները, փոփոխության ենթակա լինելու դեպքում, մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնում է «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ համապատասխան փոփոխություն կատարելու նպատակով:

45. Բողոքարկման գործընթացի ավարտից և ամփոփումից հետո ԳԹԿ-ն երեք աշխատանքային օրվա ընթացքում նախարարություն է ներկայացնում ատեստավորմանը մասնակցած բոլոր մասնակիցների ատեստավորման անհատական արդյունքները՝ ըստ առարկաների, մարզերի, ուսումնական հաստատությունների և ճիշտ կատարված առաջադրանքների թիվը (այդ թվում՝ արտահայտված տոկոսով):

46. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների հերթական ատեստավորման արդյունքների քննարկման և դրանց վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացման նպատակով նախարարի հրամանով, ըստ մարզերի, ստեղծվում են տարածքային հանձնաժողովներ:

47. Տարածքային հանձնաժողովը կազմված է համապատասխան մարզի մարզպետի աշխատակազմի (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի) կրթության ոլորտը համակարգող ստորաբաժանման երեք ներկայացուցչից:

48. Տարածքային հանձնաժողովը, մինչև ատեստավորման արդյունքների հաստատման վերաբերյալ նախարարի հրամանի ընդունումը, երկու աշխատանքային օրվա ընթացքում քննարկում և հավանության է արժանացնում իր գործունեության տարածքում անցկացված՝ ուսուցիչների հերթական ատեստավորման արդյունքները, որի վերաբերյալ կազմվում է գրավոր արձանագրություն՝ նախարարություն ներկայացնելու նպատակով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

05.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ